ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/212

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Մասնակից՝ «Աշոտ և Դայանա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Աշոտ և Դայանա» ՍՊԸ -ի ներկայացուցիչ՝ Հ. Սահակյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/15Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14090-2020 գրությամբ «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 11.09.2020թ.-ի թիվ ՀԲ//26118-2020 գրության հիման վրա, 17.09.2020թ.-ին «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 17.09.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 17.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/212 համարի ծածկագիրը:

25.09.2020թ.-ին, 08.10.2020թ.-ին և 16.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 08.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.10.2020թ.-ին:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը 11.09.2020թ. թիվ ՀԲ//26118-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/15Շ ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ), որի շրջանակում 1-

ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ն: Մասնակցին առաջարկվել է 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովում՝ հրավերով սահմանված կարգի համապատասխան:

28.08.2020թ.-ին «Աշոտ և Դայանա» ՍՊԸ տնօրենի կողմից ստացվել է գրություն այն մասին, որ մասնակիցը հրաժարվում է պայմանագիր կնքելուց և ընթացակարգի հետագա մասնակցությունից, քանի որ պայմանագրի և որակավորման ապահովումները չի կարող ներկայացնել բանկային երաշխիքի ձևով:

Մասնակցին 02.09.2020թ. պատասխան գրությամբ ծանուցվել է, որ գնման ընթացակարգի այս փուլում պայմանագրի և որկավորման ապահովման երաշխիքները անհրաժեշտ է ներկայացնել տուժանքի ձևով, քանի որ ընթացակարգը կազմակերպվել է համաձայն ՀՀ գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի:

Մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովման երաշխիքները՝ տուժանքի ձևով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը սահմանված կարգով ընթացք տալ՝ մասնակցին ընդգրկելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (բ) ենթակետը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/15Շ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.09.2020թ.-ին գրությամբ դիմել է «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14090-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում: Ներկայանալով հրավիրված նիստին Մասնակցի ներկայացուցիչը հայտնել է, որ «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/15Շ» ծածկագրով մրցույթի պայմանագիր կնքելու համար «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ն դիմել է Ընկերությանը սպասարկող բանկին՝ խնդրելով տրամադրել պայմանագրի և որակավորման ապահովման բանկային երաշխիքները: Բանկի կողմից ստացվել է մերժում, այն պատճառաբանությամբ, որ բանկային երաշխիք ստանալու համար անհրաժեշտ է առաջարկել նյութական ապահովման միջոց՝ անշարժ կամ շարժական գույքի տեսքով, ինչով պայմանավորված Մասնակիցը հրաժարվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/15Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգին հետագա մասնակցությունից և պայմանագրի կնքումից:

4. <u>ՍՑ-LO-2020/212 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 17.07.2020թ.-ին հայտարարվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/15Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ն:

ii. «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/15Շ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.08.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ին:

iv. 10.08.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից 10-րդ օրացույցային օրը ներառյալ:

v. Պատվիրատուն 21.08.2020թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/15Շ» ծածկագրով պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը՝ խնդրել է, որպեսզի վերջինս հրավերով սահմանված կարգով և ժամկետներում կնքի պայմանագիրը և ներկայացնի կնքված պայմանագրի օրինակը և որակավորման ապահովումները:

vi. 28.08.2020թ.-ին «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ 25.08.2020թ.-ին «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ն դիմել է ընկերությանը սպասարկող «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ին՝ խնդրելով տրամադրել պայմանագրի և որակավորման ապահովման բանկային երաշխիքները, համապատասխանաբար պայմանագրի ապահովման համար 19 000 000 (տասնինը միլիոն) ՀՀ դրամի և որակավորման ապահովման համար 190 000 000 (մեկ հարյուր իննսուն միլիոն) ՀՀ դրամի չափով: «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի կողմից 27/08/2020թ.-ին թիվ Կ.3-2177 գրությամբ ստացվել է մերժում, այն պատճառաբանությամբ, որ բանկային երաշխիք ստանալու համար անհրաժեշտ է առաջարկել նյութական ապահովման միջոց՝ անշարժ կամ շարժական գույքի տեսքով: Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը հրաժարվում է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/15Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հետագա մասնակցությունից, ինչպես նաև պայմանագրի կնքումից:

vii. Հանձնաժողովի 08.09.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ 28.08.2020թ.-ին «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ի տնօրենի կողմից ստացվել է գրություն այն մասին, որ Մասնակիցը հրաժարվում է պայմանագրի կնքումից և Մրցույթի հետագա մասնակցությունց, քանի որ պայմանագրի և որակավորման ապահովումները չի կարող ներկայացնել բանկային երաշխիքի տեսքով: Ի պատասխան վերոնշյալ գրության ընթացակարգի քարտուղարի կողմից Մասնակցին ուղարկվել է ծանուցուն այն մասին, որ գնման ընթացակարգի այս փուլում պայմանագրի և

որակավորման ապահովման երաշխիքները անհրաժեշտ է ներկայացնել տուժանքի ձևով, քանի որ Մրցույթը կազմակերվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն Մասնակիցը սահմանված ժամկետում չի ստորագրել և ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ին զրկել է պայմանագիր կնքելու իրավունքից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14090-2020 գրությամբ «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով,

գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի

ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 17.07.2020թ.-ին հայտարարված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/15Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 07.08.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է հաղթող մասնակից, ինչով պայմանավորված Պատվիրատուն 21.08.2020թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/15Շ» ծածկագրով պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը՝ խնդրել է, որպեսզի վերջինս հրավերով սահմանված կարգով և ժամկետներում կնքի պայմանագիրը և ներկայացնի կնքված պայմանագրի օրինակը և որակավորման ապահովումները:

28.08.2020թ.-ին «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ հրաժարվում է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/15Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգին հետագա մասնակցությունից և պայմանագրի կնքումից:

Հանձնաժողովի 08.09.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ 28.08.2020թ.-ին «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ի տնօրենի կողմից ստացվել է գրություն այն մասին, որ Մասնակիցը հրաժարվում է պայմանագրի կնքումից և Մրցույթի հետագա մասնակցությունց, քանի որ պայմանագրի և որակավորման ապահովումները չի կարող ներկայացնել բանկային երաշխիքի տեսքով: Ի պատասխան վերոնշյալ գրության ընթացակարգի քարտուղարի կողմից Մասնակցին ուղարկվել է ծանուցուն այն մասին, որ գնման ընթացակարգի այս փուլում պայմանագրի և որակավորման ապահովման երաշխիքները անհրաժեշտ է ներկայացնել տուժանքի ձևով, քանի որ Մրցույթը կազմակերվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն Մասնակիցը սահմանված ժամկետում չի ստորագրել և ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ին զրկել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/15Շ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է

ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14090-2020 գրությամբ «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/212 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**